ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 252 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 354-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 354-Լ որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) 8-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ ենթակետերով՝

«4.1) իր իրավասության շրջանակներում ազգային անվտանգության ապահովմանը մասնակցելը.

4.2) պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը.».

2) 9-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին ենթակետով՝

«20.1) կանոնադրական գործառույթներն իրականացնելիս հանցագործությունների կանխարգելման, հանցագործություն կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելու և ձերբակալելու, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ֆիզիկական անձանց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ հասցնելու, ինչպես նաև պետական պահպանության օբյեկտների և պահպանվող օբյեկտների անվտանգության սպառնալիքների կանխարգելման համար անհետաձգելի դեպքերում ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցներն օգտագործելը, եթե ողջամտորեն հնարավոր չէ այլ եղանակով հասնել սույն ենթակետում նշված նպատակներին: Ծառայությունը, օրենսդրությանը համապատասխան, պարտավոր է հատուցել ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատճառած վնասը: Սույն ենթակետում նշված նպատակների համար չեն կարող օգտագործվել դիվանագիտական, հյուպատոսական, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները.».

3) 9-րդ կետի 24-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

4) 14-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-ին և 19.2-րդ ենթակետերով՝

«19.1) սահմանում է ծառայության ծառայողների ֆիզիկական և կրակային պատրաստականության նորմատիվները, ինչպես նաև հաստատում է ֆիզիկական և կրակային պատրաստականության պարապմունքների ժամանակացույցները.

19.2) հաստատում է պետական պահպանության ոլորտի գործառույթներին առնչվող մեթոդական ուղեցույցները և ուսումնական ձեռնարկները.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ